

ԱՌ ՄԱՅՐ ԻՄ

Մայր իմ, աղբիւր կենացս, աղբիւր իմ սիրոյս,
Ո՛վ բարեք իմ, յոյս իմ, գանձ իմ երկնածիր,
Ո՛վ դու, որ զիս հոգւոյդ ի կերպ երկնեցիւր,
Եւ զԱստուած քո տըւիր աչացս առ ի լոյս:

Մայր, ժամանակն ի մէնջ թեթեւ կուտայ խոյս,
Եւ մազերուդ կ'իյնայ սպիտակ ցան և ցիր,
Մի թողուր զիս, մայր իմ, կեցիր, ո՛հ, կեցիր.
Դեռ շատ օրհնիս հարկ է թափես իմ գլխոյս:

Մայր, ծոցիս մէջ պահեմ ըզքեզ ապահով,
Չառնուն ոսկերքդ աղէտաբեր մահուան հով,
Կեանքս ի շնչոյդ առկախեալ է, ո՛վ մայրիկ.

Ի իրամ բանան թող տառապանք իմ սրտիս,
Թող ալեկոծ տանջիմ կենացս ի մրրիկ,
Ի՛նչ փոյթ, մայր իմ, միայն թէ դու ինձ ժպտիս:

ԿԱՐԱՅԵՏ Ա. ՈՍԿԵԱՆ

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Աստըզ պայծառ, ծաղիկըն վառ և մանուկ
Համագոյից են աչք և զարդ անմեղուկ:

Կան մասնաւոր ժամեր և վայրկեաններ յափշտակութեանց սրբ-
տի մարդոյ. բայց երբ տունջեան իշխան համաժառոգ արփին՝ իւր
վերջալուսովը գեղերեսելով զբնութիւն՝ կը մեկնի 'ի բաց, և
խաւարակուռ գիշերն՝ երագելով իւր երկայնեալ ստուերքը կը
տարածէ քաղաքաց և շինից վերայ, այն ատեն կ'ընկղմին հեզ
մահկանացուք խորհրդաւոր լուծեան մէջ, լուծիւն մի, որ ա-
մէն ճարտասանութենէն աւելի ազդու է և բեղմնաւոր, և ամէն
գեղեցիկ և փափուկ խորհրդոց ծնող: Ո՛ր սիրտ զգայուն, ո՛ր հո-
գի վշտակիր կարէ կալ մնալ անզգայ, մանաւանդ թէ չիյափշտա-
կուիլ այն գիշերաժամու գիւթիչ զօրութեանցը ներքե, որոնք ա-

մէն երկկտրական և մագնիսական նուրբ հոսանքէ մ'աւելի նրբա-
գոյնս կը թափանցեն սրտից խորն և պէսպէս խոհերով կը յուզեն
զայ՝ Այո, այս պահուս երբ բնութիւնն՝ իւր անարուեստ պար-
զութեամբը միայն կ'արձանանայ մեր գիմաց, և բացական նուա-
զարանի մի կամ երաժշտութեան տխուր կամ զուարթ ձայնը
կ'ուզայ լարելու մեր սրտի թելերն, կանթեղի աղօտաճանհ լոյսն
մի, փոքրիկ նշոյլ մի միայն աւելի յափշտակիչ է, քան արևուն հը-
րահոսան գետերն՝ որք կ'ողողեն գերկեր։ Այս պահուս՝ երբ երկ-
նից հաստաաւութիւնն ևս կը շարժի բոլոր իւր զարդուքն և զօրու-
թիւններով, նոյնը կը շարժէ նաև մեր մտածութեանց և գաղա-
փարաց մանրաշխարհներն, և մեր մէջ հիանալի յեղափոխու-
թիւններ և զմայլումներ յառաջ կը բերէ, զորս լեզուով բացատրե-
լն անկարելի է։ Խորհրդագգած սիրտը միայն կը զգայ զանոք ի-
րենց բուն նշանակութեամբը, կը գորովի և ընդդիմամարտ յուզ-
մանց ուրիշանոսին մէջ այնպէս կը լուղի, ինչպէս սիրտտենչիկ կա-
րապն 'ի դբօսանս խաղաղիկ լճին, որոնք կու գան և կը խաղապա-
տեն անոր ընդարձակութեամբ կուրծքը։ Միով բանիւ, այս պահուս
աւելի քան երբէք կ'ընդարձակուին մարդկային ճնշւած և վի-
րաւոր սրտերը վանմական ներշնչութեամբք և գողտրիկ գայլայլիկ-
ներով։ Իսկ միտքը նման այն օդապարիկ լուսաւորաց, որոնք կը
հողովին յարեւելից յարիմուտս, կը սարուբերի մերթ իմանալի
աշխարհին, որուն ստորնագոյն աստիճանը՝ նա ինքն է, և մերթ
այլ զգալի աշխարհիս կարգացը մէջ, որուն վերագոյն աստիճանին
վերայ յաւիտենական հսկայի մի պէս կեցած է՝ միշտ կանգուն և
յաղթական՝ կենցաղոյս պայքարին մէջ։

Այո, գիշերաժամուն աղօտ լուսոյն և սոռուերաց նորապնայ
գաշնակաւորութեանը մէջ լարեցին իրենց զուարթ և տխրագգած
սրտից քնարը ամենէն աւելի հանճարեղ մուսայքն և զգայուն մա-
տենագիրք։ Այո, այս լին խաղաղիկ ժամուց և ներդաշնակու-
թեանց իբրև մի մի անուշ արձագանգներ են Եփնէկի՝ Հագար եւ մի
Գիշերներն, Ուլոյ Ֆօսկոյի Գերեզմանականքը, Յ. Պ. Փր. Բիթ-
թէրի Սմանորոյ գիշերն և Թոշաւաին անուշքն, և այլք բազումք։
Իսկ գու փրօմէլա, որ Պանդիոնի հինաւորաց դարպասէն և
Աթենասայ բարձր գլեկէն թռար իբրև տխակ գիշերախօսիկ և
երգեր չնեցեր անմահիցն Ելլագայ, օն անմեղութեան և սուրբ
սիրոյ թևերու վերայ յեցած հաս առ իս. սուղէ այս իմ խուսա-
փական հայեացքս ընդ մութ գիշերի՝ գէպ 'ի երկնից այն անա-
ղօտ աստղը, որ իմ շիջեկափառ աչացս՝ անշէլ լոյս կը ճառագայ-
թէ. մանաւանդ թէ նա ինքն է ակն տիեզերաց, որ կը նայի յեր-
կիր՝ և երկրածնաց լքեալ սրտերը՝ գեղեցիկ յառոյ նշոյլներով

կը սփոփէ։ Շարժէ սիրատարի սիրտս՝ երթալ ոգեխառնել ընդ սրտի մանկան, որ միայն անկեղծութիւն և պարզութիւն կը չնչէ՝ այնքան նենգուպատիր դաւանաց մէջ։ առաջնորդէ իմ աչքերուս՝ հանդիպել աչացն, որք միայն անմեղութիւն և սրբութիւն և քաղցրութիւն կը ճառագայթեն՝ այս մեղաամաժ հորիզոններու վերայ։ Պարզէ զառաջեալ, քու վարդամատն ձեռամբդ, չքնադագեղ ծաղկին թերթերն, ուր գծած և գրած է մատն Արարչին, թէ սա է ակն բուսական սրտին և աշխարհին, և տրամութեան հովտաց մէջ իսկ սփոփական բուրումն է երանութեան՝ դառնացեալ սրտերու։

Ողջմբ եկիր դու առ իս, թվ լոյսդ յաւետաճանաչ, զի ինձ անկարելի է հասանել յանմատոյց քոյդ բարձրութիւն։ ողջոյն ընդ քեզ, աստղ երեկորին. օ՛ն խօսեաց գու ինձ. բնդէր աղէ առաւել 'ի սեաւ գիշերի՝ քան լուսնի լուսոյն մէջ գեղեցիկ ես և ճաճան շատէտ։ Ողջոյն քեզ համասպրամ ծաղիկ, որ բացօթեայ վայրաց մէջ աւելի խորհրդաւոր կ'երեխա, քան 'ի բնակավայրս մարդկան և 'ի ձեռագործս արուեստից։ Ողջոյն և քեզ, մանուկ քնքոյշ, որ կը ծնանիս ընդ աստեղօք և կը շրջիս 'ի մէջ երանաւէտ մարդաց և ծաղկանց. օ՛ն խօսեաց ինձ. առ ինչ արգեօք արանց կտտարելոյ տխրագին նոճիներու մէջ աւելի, քան յերամն հասակակցացդ՝ քաղցր ես, չնայխարհիկ և անպատում։

Սակայն երեքն ալ անպէտք են իրենց բնութեան և հրաշայեալցը. երեքեան իսկ գաղտնի յօգերով իրարու կապուած փունջի մը պէս՝ գիշերոյ նման խոր լուսութիւն կը պահեն։ այլ բնական և բունազանցական օրինաց անյեղի տառերն, ինչպէս նաեւ անտառ աահմանքն՝ այդ երեք լուսափարփառ աչքերու մէջ աւելի՝ քան լուսաւոր շրթանց վերայ են գիւրընթեռնի։ Ո՛չ արգեօք ինչպէս առաջնաստեղծ լոյսը՝ մահկանացու աչքերը լուսաւորելու՝ այս պէս ալ աչքերը մարմնոց տխրութիւնը փարատելու համար եղած են և կը փայլկտան։ Այսպէս ուրեմն տիեզերացս մէջ ծագող և առնոր կարգացը զուարթութիւն տառող այս եռաթիւ աչաց զաղտնիքն իսկ՝ այն կարգաց հետ առնեցած սերտ առնչութեան և հաւմեմատութեան մէջ կայացած է՝ քան յինքեանս միայն։

Այս, անթիւ անհամար աշխարհաց շղթայաշար շարքին և կարգաց մէջ ամենայն ինչ առնչական է, 'ի դուր է որոնել բացարձակ ինչ. ամենայն ինչ պակասելի է և յեղական, 'ի դուր է որոնել կէտ ինչ հաստատուն և անփոփոխ յանբաւութեան անդ միջոցի։ Հինգ են թուով Գերազանցականք. այսինքն է էակն, միւս, ձլնարիտն, քարին և գեղեցիկն, որոնք հասարակաց են ամենայն արարածոց և կ'ընդգորկեն զամենայն արարածս։ բայց բնազանցական տեսակէտով ամէքն ալ կու գան կը նոյնանան ընդհանուր էակին հետ,

մտաց և սրտի կարողութիւններն են, որ զանոնք էակէն կը դատեն և իրենց հաստաւածակողմանց յատուկ գոյներովը կը նկատեն: Բազմաւորութեան դաշնակաւորումն՝ 'ի միութեան, և միութեան անճառ դաշնակաւորութիւնը՝ բազմաւորութեան հետ՝ է այն խորհրդական հանգոյցը, այն միակ պատճառը, որ կը յօրինէ մեր սրտին և մտաց յափշտակութեան անպատում նուագը, տիեզերական կարգի գեղեցկութեան և սքանչելեաց հանդէպ: Այն սիրտը՝ որ այս գեղեցկութիւնս չի զգար, այն միտքը՝ որ այս հրաշալիքս չառնուր կամ չուզեր առնուլ 'ի միտ՝ յոյժ թշուառ է և աղքատ:

Այսպէս գիտեմ ես զքեզ, այսպէս ճանչցիր և դու, ո՞վ լոյսդ եղական, մահաւանդ թէ աստղդ լուսաճաճանչ, որ կը ծագիս և կը ծաւալիս զքեզ և զմեզ պատող խաւարին մէջ և կը ջանաս հալածել զխաւարդ աւրնյակից: Այսպէս գիտեմ զքեզ, ո՞վ ծաղիկդ գեղանի, որ կը ծնանիս և կը մեռնիս դաշտերու և հովտաց մէջ, մեր տխուր հովիտները զուարթացնելու համար: Այսպէս գիտեմ և զքեզ, ո՞վ անմեղ մանկիկ, որ մերթ կուգաս կ'երեսիս մարդկութեան թշուառ հորիզոնին վերայ՝ անոր ցաւերն և վշտերն ամփքելու համար, և մերթ դու ինքի կ'երթաս և կը զարնուիս յանգէտս, քեզի անծանօթ և ջաղխիչ պարեխներու հետ:

Սակայն և այսպէս յառաջէ. վասն զի շատ բարձր է և վսեմքու ասպարէզդ. ելիր, բարձրացիր 'ի վեր: Աստղը՝ որուն վրայ դու պնդեցեալ կը նայիս յընթանալը՝ 'ի վեր է քան զքեզ. և ծաղիկն՝ յոր կը հրճուիս՝ խոնարհ. սակայն քու ընթացքդ ուղղեալ է 'ի բնէ միանգամայն առ աստղն և առ ծաղիկն. և աստղին և ծաղիկի խորհրդաւոր հանգոյցները քու մէջդ կը կնճռին և կը լուծուին. ի գործադրութեան անդ արարչագործ զօրութեան՝ արուեստին օրաբեր և գիշերավար քեզմէ դարերով յառաջ էացաւ և սկսաւ ընթանալ. և երկնից հրեշտակներն՝ աստեղք ծերք՝ դովեցին զնա և սքանչացան 'ի գեղ նորա վայելուչ. սակայն դու երիցագոյն էիր և ես քու Արարողիդ յառաջադրութեանը մէջ. գեղեցիկ քան զամենայն արեգակունս, և արեգակներն իսկ քեզի արբանեկելու համար հաստեցան:

Բայց ինչ է պարտ 'ի նոյնանուագ բանս դեգերել. վասն զի գիշերն իւր երագութեամբը կը յառաջէ. ժամերը կը զարձնեն աստեղաց անիւններն, իսկ աստեղք զանիւս մտաց և մտածութեանց իմոց, հարկ է սլանալ միշտ 'ի վեր. հարկ է երթալ խորասուզիլ 'ի մշտնջենարուդիս աղբերակն՝ էութեան, բարութեան, գեղեցկութեան և լուսոյ, յորմէ հեղան զեղան 'ի քեզ այնքան գեղ, բարութիւն և շնորհ, ո՞վ ակնդ և հայելիդ համագոյից, մանուկ քրնջոյ. մինչև որ տեսնեմ զքեզ ամբողջապէս՝ քու ամբողջական էութեան:

թեանդ մէջ, և քեզմով ալ աստղին և ծաղկին գաղտնիքը, զորս բնութեան Արարիչը խորհրդաւոր հանգոյցով մ'ուգեց իրարու հետ կապել:

Մեծ իմաստն լայսնից՝ իւր աննոռնական հաշուոց և բնածին գաղափարաց անծայրածիր շաղագաց վերայ հակայաբայլ յառաջելով՝ նկատեց զմարդկային հոգին իբրև ուրուագիծ իմն (schema), յորում՝ նկարուած են գունակ գունակ տեսակք համագոյնից: Հէրշէլ, Լափլատ, Նետոն, Արակոյ, Հ. Սէքքի և Արեափարէլի իրենց հեռագիտակին հետ գոգցես իրենք զիրենք ևս երկնից անհուն աշխարհաց մէջ մղելով, բիւրապատիկ ծածուկս լուսոյ և նորանոր լուսաւորաց տեսին, և սքանչացան ծիր կաթին վերայ: Լինէնոս, Ժէօֆրուայ — Սէնդ Հիլէր, Միլն Եղուար և այլք բազումք՝ զինուած մանրացուցակային գործեօք և հսկայադործ հանճարով՝ հազարս հազարաց թուեցին զարմանալիս միայն ծաղկան միոյ փոքրիկ բաժակին մէջ և հիացան:

Արդ՝ հոգիս այս մարդկային, համապատկերս այս տիեզերաց՝ է նոյն ինքն աղածրի մանուկն, որ իր մէջ կը համահաւաքէ բոլոր արարչութեան հրաշալիքն, որ իւր գարշապարօքն երկիրս կը կուխէ, բայց իւր հոգեկան բարձր կատարելութեամբը յերկինս կը վերաթեւէ հրեշտակօրէն, և անոր սրովբէարծարծ սրտին և սիրոյն առջև սառուցեալ լեռներն անգամ ՚ի ջերմ յարտօսր կը լուծանին: Ծիր կաթին՝ է տիեզերքն այն անշխիւնելի և անապական աշխարհաց, որոնց կեդրոնական աստղին, կամ լաւ ևս կեդրոնաց կեդրոնի յըջանին, մեծութեան և գոյութեան հանգամանքները՝ գրեթէ յաւիտենական խորոց մէջ թաղուած կը մնան: Սակայն մանուկն՝ որ կը փայլի այս փոքրիկ գնտիս վերայ, որ կը մնէ յանկեան ուրեք և կամ իր գորովագութ մօրը գրկին և սիրալիր գրգռանաց մէջ, շատ աւելի մեծ է, ազնիւ և գերապանծ քան ըզնա: միզամածներէն աւելի հոգեկան աշխարհներ կը շարժին աւոր փոքրիկ ըզեղին մէջ. իսկ սիրտը՝ համատարած ուկիանոսէն աւելի գաղտնի բաներ կը պարունակէ իւր մէջ, և մանուկն միայն է տէր և ժառանգ այն ծածուկ գանձերուն: Մ'անուկը՝ լոկ առաւելին անհատ մի չէ մարդկութեան մէջ, այլ անոր սիրտը կը կազմէ, անոր աչքն է, յորմէ կ'արտաբերին շնորհք և քաղցրութիւն: Այդ ամենափափուկ և վճիտ աչքերուն մէջ, այդ ամենազգայուն սրտին վերայ կը հանգչի Ամօրը (Սէր), կը ննջէ, կը յառնէ, կ'աճի և երբեք չպիտի մեռնի: Մ'արմնազգեցիկ այդ զուարթունը նախաւսահմանուած է ՚ի յաւիտենից փարօտելու ընտանի յարկին տրլութիւնը, ինչպէս աստղն ալ՝ գիշերոյ մթութիւնը: Այդ ամենամաքուր և անսպառ սիրոյ և քաղցրութեան անձնաւորութիւնն

է, որ անլուծանելի կերպով կը միացնէ և կ'ամրապնդէ ամուսնական յօդը, և ծնողաց կենսական գոյութեան և ապրուստի դէմ լեռնացեալ գծաբաշխութիւնները կը հարթէ դաշտաձև, և ցաւերը կը մեղմէ։ Այն յարկին ներքեւ ուր չկայ մանուկ, անդ չիք և ուրախութիւն։ Իսկ ուր կը ժպտի մանուկն՝ անդ է երջանկութիւն։

Մանուկն՝ եղած է միշտ և պիտի լինի իբրեւ յաւիտենական իդէալ մի ոչ միայն 'ի միտս կնոջ, այլ ամենայն մարդկան առհասարակ։ Ո՛ր և է սիրտ անոր կը ձկտի բնականապէս և առանց բաց ցաւութեան, և կը սիրէ զայն կաթնով։ Վայրագաստն բռնաւորաց սրտերու և սուրերու բռնութիւնն իսկ այդ քնքոյշ և անզէն էակին ոտից առջև նկուն եղաւ և պարտեցաւ։ Մնգուիտ և փառաւոր Հերովդէսին պէս սուրեր ելծէ յանդգնեցան երբեմն մխիւ աւտոր սիրտը, անզէն և անդ խորին կարեկցութեան և արդար վրէժխնդրութեան ձայնը հնչեց 'ի Հռամայ։ Իսկ Հռաքելի պէս որդեկորոյս մարց յաւիտենական ողբերն՝ ալ ինչ բանով կրնան լռեցուիլ։ Յոյն և հռովմայեցի մուսաները մանկան մէջ մարմնաւորեցին զսէր, որ հղիւթեան հրեշտակի մի պէս կը սլանայ աշխարհիս մէկ ծայրէն ցմիւսն և կը սիրէ այն ամենայն որ գեղեցիկ է, սուրբ և բարի։ Աստուածութիւնք երկնից և երկրածին յաւերժահարաւունք անգամ հազորդ լինել անոր սիրոյն տոնչափան։ Ո՛րքան գոյարիկ է, առ այս, որքան գեղեցիկ կերպով և հոգեկան կրիւք լի նկարուած է վ. Թ. Մարտէնի փափուկ վրձինի ներքեւ և Տեաւ լեւաւ մէջ՝ մարդկային գոյութեան սկիզբն և վերջը կազմող այս սէրը և սիրավառ մանուկն, այս անշիջանելի հուրս՝ առանց որոյ ոչ ընտանիք և ոչ ալ մարդային ընկերութիւնը պիտի կարէին ձուլուիլ ի մի։ առանց որոյ ամէն բան մեռած և ցամաք է, և մարդկային ազգի անընդհատ յաջորդութիւնն իսկ ընդհատուած պէտք էր համարել։

Քրիստոնէական գեղարուեստը և ճարտար նկարիչք՝ երկնից աննիւթական և հոգեղէն զուարթունքները մանկակերպ նկարեցին, անոնց շնորհքն և գեղեցկութիւնն ըստ կարելոյն լաւ արտափայլեցնելու համար։ մանաւանդ թէ հրեշտակներպ մանուկներ են, որոնք կը շքեղազարդեն անմահանուն Մուրիլլոյի գլուխ գործոցն, և կը բորբոքեն մեր սէրը դէպ 'ի անոր գերամաքուր առարկայն, Կոյսն սուրբ։

Մանկան իդէալն է, որ կու տայ գորովագութ մօր մի յափշտակուիլ 'ի գերահրաշ զմայլմունս սիրոյ, զոր ունի իւր գրկացը մէջ, և խանդավառական համբոյրներու և քաղցրութեանց ծովուն մէջ ընկզմած առնն, արտասուաց մարգարիտներ կու տայ տեղալ անոր աչքերէն։ Այնպէս որ մանուկը թէ իւր կրծոցը վրայ սեղմած

ժամանակ և թէ անոր բացակայութեան ատեն՝ ուրիշ բան չի խորհիր և խօսիր՝ բայց եթէ, Տղաս :

Այո՛, տղաս կը մնչէ անոր յափշտակուած սիրտն ամենուրեք, և իր ո՛ր և իցէ սիրած բանը՝ տղաս կ'անուանէ : Խորին հայեացք մի ձգելով Ռափայէլի՝ Մարթնաներուն, և Գամբայի՝ Համբոյրիին վրայ, ո՞վ կարէ չի զգալ սուրբ սիրոյ ծածանմունքն և ծաւալմունքը և չի գորովիլ անդ, ուր գլխած մօր մ' և քնքոյշ մանկան համբոյրըն ամբողջ մարդկեղէն էակի հոգեբանական աշխարհը կը ներկայացնեն մեզ, բոլոր իւր զգացմունքներով, հիացմամբ և յափշտակութեամբ, որոնց ճշնող յուզմանց ներքե լեզուն կը լռէ, աշխարհը կը փակուին անբացատրելի երանութեան մի մէջ, և սիրտը միայն կարծես թէ արթուն կայ և կը մնչէ առ սիրտ . . .

Մանկան իգէալի բարձրութիւնն և ազնուութիւնը գեռ աւելի մեծ է և նուիրական մանաւանդ այնու, եթէ մտածենք, որ նոյն իսկ Տէրն ամենայն մեծութեան և գեղեցկութեան, անոր հետ այնպէս կը միանայ, մինչև անգամ ինքն կը լինի մանուկ, և մանկացեալն՝ Աստուած ճշմարիտ : Իսկ պատճառք այնպիսի նորապահնչ միաւորութեան էին շնորհք, սէր և քաղցրութիւն, զորս Աստուած կը հեղոյր անոր մէջ, և նա ալ 'ի մարդկութիւն : Ուրեմն ասկէ կը հետեի, թէ ո՛րքան խղճի մտքը նայելու են այդ երկնային իտէալին վրայ, ծնողք և տեսուչք հոգւոց նոցին : ո՛րքան ուշի ուշով պահելու է երկնածիր պարգևաց, սիրոյ և քաղցրութեան այդ ջինջ հայեցիլն, որպէս զի չի բեկանի. այդ անգին գանձը, որպէս զի չի կողոպտուի : Հուսկ ուրեմն այդ գեռաբուսիկ արարածը, որպէս զի լաւ կերպով զարգանայ և պտղաբերի :

Մինչդեռ միտքս այսպիսի խոհերու և խորերու մէջ ընկղմած էր, աչքերս երկնային կամարը կը գիտէին անբթիթ : Եւ անա սրբացաւ յանկարծ գիշերի ստուերաց մէջէն լուսակիզն ասուպն մի, և պարունակէն լուսավառ գիծ մը մեկնելով՝ անհետացաւ յաչացրա : Բարէ, ըսի մտքէս, աչքերեք այսպէս գիւրասահ են և կեանք մեր : Իսկ գու, մանուկ, կը ննջես խաղաղիկ՝ գլխովին անգէտ քու բաղդիդ և ապագային, ուր կը հասէ կենացդ արփին : Քու մայրիկդ ևս եթէ անցաւ երեք նման թօիչ աստեղս, և կամ անցնելու ըլլայ կենաց 'ի մահ, ի բերկրալից յարկէն՝ ի տխուր գերեզման, ո՞վ պիտի լռեցնէ այնուհետե քու ողբերդ, ո՞վ պիտի մխիթարէ քու տխեղծ հասակդ : — Այլ մանուկն՝ ոչ տրտմութեան է ենթակայ և ոչ իսկ ողբոց նշանակութիւնը գիտէ տակաւին : Այլ կը ննջէ անուշիկ, և անոյշ երազներու մէջէն այնպէս կ'անցնի կ'երթայ, ինչպէս ծաղիկն 'ի հոյզս բաժակին, և աստղն՝ իւր լուսաւոր ճանապարհին վրայ : Ո՛հ, ննջէ անմեղուկ, երազէ, անցիր : զի և

թէ բարձաւ մայրիկն, ունիս տակաւին հայրիկ, ունիս Բ ծաղիկ :

Կը յառաջէ նոյնպէս և երկրորդ պահն գիշերոյ . և ահա կը մը-
թագնին երկինք ամպովք . սասակաշունչ հովը վիշապաձայն չչելով
կը տարուբերէ գալարիններն և դարձաբերձ մայրիս . որոտընս
դաստ ամպերը՝ կը տեղան երկրիս վրայ իրենց ցամառն նետերն և
կայծակունքը : Տխուր է բնութիւնը, տխրութիւն և արհաւիրք
կը տիրեն նաև երկրիս վրայ : Այլ՝ ի տուզ վայրկեան ժամանակի
յանկարծ կը պատառի գիշերոյ քօղն, և սև խմկերու գանգուր
հերաց մէջէն կը բանայ երկինքը իւր աչքերը . ահա կը փայլի
աստղն ամենեկն պայծառ և գեղեցիկ : Այսպէս է նաև մանուկն,
գիւրաւ կը խռովի, կը տխրի և կու լայ և արտասուաց շիթերն
այնպէս կը կտտեն անոր աչքերէն, ինչպէս լոյսն յաստեղաց :
սակայն այս տխրութիւնը չի տեսեր . յանկարծ շուտով կը մոռնայ
ամէն բան : Աստեղ զուարթագին ճառագայթին հետ՝ ինքն ալ կը
բանայ իւր լուսափարփառ ականոցիքն, և անուշիկ ժպիտով կ'ող-
ջուէ գաստղն : Ժպտէ անմեղով, ժպտէ հոգւոյս հետ . ժպտէ սի-
րասուն, զի կենացդ գարունն է եկել . սիրտդ անվիշտ է, միտքդ
անհոգ, բնութիւնդ անգործ և խաղաղիկ : Այսպէս կը թարչա-
մի, կը խոնարհի ծաղիկի կոկոնն իւր ցօղունին վրայ երբ հիւսի-
սը կամ հարաւ սաստկաշունչ կը բախեն զայն . բայց երբ այգուն
և արեւուն շողը կը տեսնէ, անդէն կը բանայ իւր ամօթ խած աչքերն
և իւր անուշահոտութիւն կը բուրէ ամենուն :

Ելիր դու, մանուկ, ուրեմն ի գաշտ, լեռ, ձոր և յարա . ելիր,
թիթեռնիկդ անմահութեան, թևապարել ընդ թիթեռունս մար-
գայ : Ելիր, բայց եթէ նոքա երթան ի տիղմ, յեղր և ի գառիւ
վայր, դու գնա՝ ի գառիվերս երկնաշու ուղւոյդ . գնա՝ դէպ ուզիդ
յերանութիւն, շեշտ յանմահութիւն, բայց գնա՝ միշտ :

Սակայն ոչ . վճիռ մ'է անդարձական, թէ հրեշտակին և եթ
երկնից արուած է յերկինս անխռով խաղաղութիւն և անփոխա-
դրելի վիճակ երանութեան, բայց ոչ նոյնպէս զաւակին յանցաւա-
րութեան, որ կը դեգերի երկրիս վրայ և սահեցական տաքերաց
հետ : Երբթայ արեգակն ի հիւսիս, կը դառնայ ի հարաւ : Ի իս-
լիւ լուսինը մերթ կը հալի և մաշի և մերթ կ'աճի, և երկաքան-
շիւրին իսկ կան որոշ ժամանակ և վայրկեանք խաւարման և լուսա-
ւորութեան : Մեր մթնոլորտէն քաջ ի բացեալ շրջող ասուպները
կը հոսին մերթ մէկ արեգակէն ցմիւսն, և մերթ ալ գահափոխե-
լով երկրիս կամ անծանօթ աշխարհաց մէջ՝ կը ծախին և ի հոգ
կը դառնան :

Գիտաւորներ, որք զարմանալի պարբերութեամբ կը կատարեն
իրենց դարական շրջանքը, միշտ նորանոր կը կորսնցնեն և կամ կը

յաւելուն իրենց լուսոյ քանակն : Աղօտ և շիջելափառ կ'երևի մեզ այսօր բեւեալին աստղը , որ երբեմն փայլ էր երկնից և ուղեցոյց մարդկան , Այսպէս և այլ աստեղք երկնից , նեղ-րոնաց կեդրոնն է միայն՝ որ անոնց աներևակայելի մեծութեան և երազութեան ա-նիւններն հղովելով , առ ինքն կը ձգէ զամենայն , և ամենուն կու-տայ կանոնաւոր կերպով յառաջել իրենց ընթացիցը մէջ : Ներքն-գունականութեան այս ընդհանուր օրինաց , չբստմ հարկի , ներքե կը թօթափին միշտ նաև ծաղիկները գաշտին վրայ : Այլ ինչպէս բնութեան՝ այսպէս ալ մարդկային կենաց կան ստուգիւ եղանակք և փոփոխմունք : Երբ բնածին կիրքերն , իղձք և յօժարութիւնք՝ ի ներքուստ , իսկ մարմին , աշխարհ և հրապոյրք՝ արտաքուստ գան մղելու այն մատաղատի էակն ի յորձանս փորձութեանց , այն ատեն պիտի կծկի և ցամաքի այն զգայուն սիրտը , որ աղբիւր էր ուրախութեան : Այնուհետև տխրութիւնք և խորշումք պիտի տիրեն այն փայլուն գիմացը վրայ , ինչպէս հիւսիսը գալարագեղ բոյսին վրայ : Այն ատեն պիտի պղտորին այն ջինջ ականդիքն , որոնք պար-զութեան փայլակներ կը ցոլացնէին : Մանկական փոքրիկ սիրտն , ուր թաաերաբնով մը պէս կ'ընթանան բարին և չարը , գեղեցի-կըն և աղեղը , ազնիւն և վատը , և կը մրցին խաղալ իրենց յա-տուկ դերը , այնուհետև պիտի փոխի լինի մշտադատան ծով մի , օւր ալիք զալիս պիտի մղեն , խորտակեն և խորտակին : Մերթ գծաւարութեանց անանցանելի լեւներ և խոլնդոտներ պիտի ել-լեն անոր առջին , և մերթ ալ բաղդի և յաջողութեան ծաղկազարդ հովիտներ :

Անցիր , մանուկ սիրուն , անցիր դու այդ հովիտներէն՝ ճեմելով և հաւաքելով զծաղիկս միայն երջանկութեան , որոնք կ'ելլեն քեզի ընդ առաջ . բոլորէ քու գլուխդ և կուրծքդ պսակօք վարդից և շու-շաններու , վասն զի քեզմէ աւելի շուտ պիտի թառամին : Ել , ան-ցիր այդ դժուարակող լեռանց անանցանելի բարձրութիւններէն , դիտելով զստորայինս՝ որք հեղեղի նման կը հոսին և կը գնան ընդ ոտիւքդ : Անցիր մարդկային կենաց անցուկ կրճերէն և ձորերէն , կառուցանելով զակնդ յաստղն բաղդիդ , զոր հաստատեց Աստուած յերկինս քու կենացդ ուղին պատող խաւարին մէջ : Մի վշատիր , բիւր արկածից գահալէժներ և վճեր պիտի բացուին հետզհետէ քու օտիցդ առջև՝ որչափ յառաջես անասուգութեան մէջ : Հազար և մի արհաւիրք պիտի գան ահաբեկել . սակայն և այնպէս հարկ է յառաջել . վասն զի կենաց սահմաններն յոյժ անձուկ են , և մա-հուան անդարձական վճիռը կը ոտիպէ կտրել անցնիլ այդ սահ-մանները :

Կծգմ՝ և պատրաստ է մանուկն առ ամենայն ինչ . առ այս կը

մղեն գնա նաև իղձքն տարապայմանք , և դիւրահոյով անիւք՝ տղա-
յական հասակին , լի է անոյշ երազներով և պատրանք . և այս ե-
րազներս և պատրանքներս են , աւանդ , որոնք արբուցանելով անոր
խաբէութեան բաժակը՝ կը փութացնեն փոխանակելու զանվիշտ և
երջանիկ մանկութիւնը՝ ընդ այրականութեան , զոր նա աւելի
քաղցր կը տեսնէ , և զգեղեցիկ գարունն կենաց՝ աշնան հետ , ու-
րուն ընդ հուպ կը յաջորդէ ցուրտ ձմեռն ծերութեան , Այո՛ր , կ'ե-
րազէ նա զերիտասարդութիւն , կ'երազէ այրական հասակը , կ'ե-
րազէ զծերութիւն ալեղարդ և զաղէտս նորին . իսկ յերազեն՝ կը
տեսնէ թափառող բոցեր , որոնք կը յածին ճահիճներուն վրայ և
յերեսս դայտին սրբոյ , և կ'ըսէ նա անդէն . Ահաւասիկ՝ ասոնք են
իմ անմտութեանս օրերն և ժամերը , որք 'ի զուր վատնեցան և
չպիտի դառնան այլ ևս : Կը տեսնէ օդուն մէջ թռուցիկ աստղեր ,
որոնք մեծ շառաչիւնով կը գահավիժին երկրիս վրայ և կը ծախին .
Ես իսկ եմ այս , կը խօսի նա 'ի խորս տրտման թախիժ սրտին : Ե-
րեակայութեան հրաբուրդը ցնորքներն՝ անոր աչքին առջև կը ներ-
կայացնեն գիշերաշրջիկներ , որոնք տանեաց վրայ կը խարխափեն
Անդիէն աղօրին հողմավար՝ իր թեւերը վեր կը բարձրացընէ , և
ցամաքեալ ոսկորտին ալ յուղարկաւորութեան դագաղին մէջ հետ
գհետէ կերպարանքներ կը զգենու : Այսքան արհաւիրներու և վա-
րանմանց մէջ կը հնչէ յանկարծ անոր ականջացը մէջ երաժշտու-
թեան անոյշ ձայնը , որ կու գայ աշտարակի բարձրութենէն և
բացական տաճարէն՝ իբր աւետաբեր Ամանորոյ , կաթողին ազ-
դեցութեամբ մ'ի խոր կը խոցուի , կը նայի մէյմը 'ի ծիրն երկնից ,
և մէկ մ'այլ յերեսս լայնատարած երկրին՝ ուր ծնաւ մանուկ . և
կը տեսնէ իւր հասակակիցքն , որք իրմէն աւելի երանիկ են և եր-
ջանիկ , վարիչք և վարժիչք մարդկանց , հայրեր բարերարոյ ման-
կանց , և կ'ըսէ լալագին . Աւանդ , ես ալ կրնայի անոնց պէս ըլլալ .
այն , իմ սիրելի ծնողքս , ես ալ կրնայի երջանիկ ըլլալ , եթէ ձեր
պատուէրները ճշդիւ կատարած ըլլայի մանկութեան օրերուս մէջ .
Մանկութեան և անոր անմեղ զբօսանաց քաղցր յիշատակը կը
պատկերանայ անոր առջև . չի կրնար ընդերկար անոր վրայ նա-
յիլ . կը փակէ իւր աչքերն , և ուղիք արտասուաց կը հոսեն 'ի
վերայ սառուցեալ ձեան ծերութեան . ինքիւրմէ ելած՝ կը հառաչէ
անմիթիթար . Ինձի դարձիր , մանկութիւն : Եւ ահա կը դառնայ
մանկութիւնը , վասն զի նա երազի մէջ և յանուրջս ըղձիցն միայն կը
տեսնէր զծերութիւն , բայց ինքն էր իրօք մանուկ , տիօք պատարուն .
Թառալէ մանուկ , յանուրջս և 'ի քուն , յառալէ յարթնութեան .
օն յառաջ , միշտ ուղղութեամբ ճամբուն վրայ . մի ճեպիր , մի վա-
րանիր բնաւ . մեղրալուսիններդ ևս ուշ կամ շուտ պիտի կատարես

լուսնի լուսով և բիւր հրճուանաց մէջ . սակայն այդ հրճուանքն ևս անըրջոյց պէս՝ անկայուն են և խուսափով : Պտուղը միայն է յաւերժական . սակայն պողաբերելովդ՝ պիտի ցամաքիս, և մոռացութիւնը պիտի ծածկեն քու կեանքդ . իսկ անպտուղ մնալովդ՝ ոչինչն և մոռացութիւնը պիտի ծածկեն քու անունդ, ինչպէս խաւարմունք կը ծածկեն յայաց արեն ու լուսինն ի բիւր աստեղս : Յառաջէ անսայթաք ընդ աստեղան՝ ուր ծնար . յառաջէ համասպրամ ծաղկանց միջէն, զորս կամ քու և կամ բնութեան Արարչին հայրախնամ ձեռքերը տնկեցին ճամբուդ վրայ : Սակայն, աւաղ, ծաղիկդ իսկ չէ ամենեւին անփուշ, և փշոց միջէն միայն պիտի քաղես ծաղիկս : Յառաջէ անմեղուկ, առանց կասելու կամ յետս դառնալու եթէ երբէք յանցաւորաց կամ մահապարտներուն բանտին մէջ ևս արգելական պահելու ըլլան զքեզ մարդիկ, եթէ զրկեն զքեզ ի սիրելեաց և յընկերութենէ մարդկան, հօն պիտի գայ դարձեալ քու բաղդիդ զուգակից աստղին ճառագայթն և փարատէ քու տրտմութեանդ խաւարը : Նաւարկէ զքեզ պատող Ովկիանոսին մէջ, ուր եթէ փոթորիկք և ամպրոպք աստի, և անտի կատաղի ալիքներ իսկ գա՛ն և բաղխեն հոգւոյդ նաւակն, եթէ հատանելու ըլլան զխարխիս յուսոյդ, հօն ևս պիտի տեսնես բեռնային աստղեր, սփոփիչ ժպիտն և ելլես դարձեալ յանդորր նաւահանդիստ, ուր և գնաս : Գնա՛ ընդ կարաւանս՝ հեռաւոր յայխարհներ, փութա՛ ի տուր և առս վաճառուց, յուսումնական հետազոտութիւնս անծանօթ վայրաց, և յօգնութիւն կարօտելոց : Եթէ զանխուլ անտառներու մէջ ևս մոլորելու ըլլաս, եթէ աւազուտ անապատներու մէջ թափառական յածիս ու կոծիս, հօն իսկ պիտի ծագէ քու մըլխիթարիչ աստղդ . դու անոր լուսոյն և նա ալ քու գիշերաչու և ցայդանուագ երգոցդ մէջէն պիտի յառաջէք զուարթ : Յառաջ, յառաջ, ո՛վ հրեշտակ լուսագեղ, նոյն իսկ քու ծերութեանդ և կենացդ վերջին վայրկեաններուն մէջ . եթէ մահուան սե ասուերն ևս գայ գոցել քու արեգակնափայլ աչքերդ, անմահութեան աստղը չպիտի յապաղի բանալ զայնս անմահական լուսին և երանութեան մէջ : Եթէ սգազգեաց դագաղին մէջ իսկ օր մ'ուզեն դնել զքեզ մարդիկ, ծաղիկները պսակ պիտի բոլորեն քու լանջացդ վրայ և լուսինը մեղր և կաթ պիտի կաթեցնէ քու շրթներուդ : Եթէ գերեզմանի հոգը ուզէ երբէք ծածկել զքեզ իւր ծոցին մէջ, քու առաքելութիւններդ դարձեալ անթառամ վարդեր և շուշաններ պիտի բողբոջեն քու չորս կողմը և դամբանիդ միակերպութիւնն ընդհատեն : Միով բանիւ, զուարթութեան աստղը, երջանկութեան ծաղիկն և սիրոյ սոխակն՝ միշտ անմեկին պիտի մնան քեզմէ, միշտ երգեն պիտի անմեղ մանկութեանդ և սրբամաքուր

սիրող անուելի և անվերջ յայնչումն, մինչև որ Տեառնադարձութան փողին ձայնը և յարութեան նոր գարունը՝ ծաղկի մի պէս վերըստին բուսցնեն զքեզ՝ ի կոյս գերեզմանէ՝ գեղեցիկ և անթարչամ, մինչև որ մահկանացուդ բոլորովին փոխուի յանմահութիւն և մանկութիւնդ՝ ի զուարթութիւն անտխրական։

Հ. ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳՍԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԻՇԽԱՆՈՒՅԻ

Պոնաբարդեանց և անոնց սերտ ազգականաց կեանքն այնքան և այնպիսի պատահարք լի է՝ որ աշխարհիս ամէն անկիւն՝ լսեց պատմութեան վրայ գլուխ մի կրնան աւելցնել։ Այս պատճառաւ զարմանք չէ որ ամերիկեան The Cosmopolitan վերջին հանգիսին մէջ՝ Ճոննէթ. Ճիլտէր տիկնոջ գրութիւնը կը գտնենք, յորում սա՝ Յովսէփ Պոնաբարդին ի Պորտէնդոն անցուցած կենաց և լիախէն Մուրատ իշխանին՝ ամերիկացի իշխանուհւոյ մը հետ կատարած ամուսնութեան վրայ համառօտիւ կը խօսի։

Պորտէնդոն Նիւ-Ճըքսի նահանգին առան մ'է. Նիւ Եօքէն անդ նշան հեռաւորութեամբ՝ զբօսալի բլրոյ մը վրայ, Յովսէփ Պոնաբարդ, եղբայր Նաբոլէոնի Ա, երբեմն թագաւոր Նէպօլէոնի և Սպանիոյ, իրենները այս առանս փոխադրեց՝ հանդերձ բազմութիւ երիտասարդ իշխանօք և իշխանուհեօք. ասոնց գալուստն հոգ նշանաւոր դէպք մ'եղաւ ամերիկեան ռամկապետական և անանուն ընկերութեան մէջ։ Այս երեսելի պքսորելոց մերձաւորներէն մին էր Ֆրազէր հրամանատար զօրաց, որ Գէորգ թագաւորին յԱմերիկա զրկած բանակին հետ էր՝ գաղթականաց ապստամբութիւնը ընկճելու համար։ Ֆրազէր ի սկզբան սակաւ մի ժամանակ Հաւաւային կարողինայի մէջ բնակեցաւ, ապա ի Հիւսիս եկաւ, և փափաքելով փխդելփիոյ մօտ ըլլալ, և միանգամայն գիւղական կեանք ալ վայելել, ի Պորտէնդոն մեծ և հանգիստ տուն մի շինել տուաւ, և հոն եկաւ բնակելու իր որդւոյն և դստերաց հետ։ Դրստերաց մէջ կրտսերագոյնն էր կարողինա, իսկ երիտասարդ իշխանն լիախէն Մուրատ՝ Յովսէփ Պոնաբարդէն իբրեւ պարգև ընդունած էր ընդարձակ երկիր մը՝ յորում իւր ժամանակը կ'անցընէր։ Չեռներէց էր, և իւր անուամբը միգեց զԱմերիկացիս, և այս ժամանակներս միտքը գրաւ ամուսնանալ ամերիկացի օրիորդի մը հետ, և Ֆրազէրի ընտանիքն այս բանին հաւանեցան, բայց Յովսէփ այն աստիճանի վատացաւ՝ որ հաստատեց որ եթէ նա այդ օրիորդին հետ ամուսնանայ՝ ոչ միայն ի ժառանգութենէ պիւ-